

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ <<-ՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՆԱԿՈՑԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱՆ ԱՆՁԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ




«ՀԻՂՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Հունվար 2022թ.

Հունվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում նորմայից բարձր է եղել 0,5-1, Լոռիում և Տավուշում՝ 1-3, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքում՝ 0,5-1,5, Արարատում և Արմավիրում՝ 1,5-2 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և չորանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում նորմայից բարձր է եղել 1-3 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում, բացառությամբ Արարատյան դաշտի, որտեղ բարձր է եղել նորմայից 1,5-2,0 աստիճանով:


Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 21-61%, Վայոց ձորում՝ 123-130%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 119-155%, հովտային շրջաններում՝ 179%, Շիրակում՝ 115-123%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 104-138%, նախալեռնային շրջաններում՝ 95%, Լոռիում՝ 50-81%, Գեղարքունիքում՝ 25-121%, Արմավիրում՝ 47%, Արարատում՝ 31-77%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 68-80%, լեռնային շրջաններում՝ 102-140%, Երևան քաղաքում՝ 41-63%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Հունվարի 6-9-ին, 17-18-ին, 21-23-ին դիտվել է առանց տեղումների եղանակ, 1-3-ին, 11-12-ին, 15-ին, 28-31-ին՝ առանձին շրջաններում, 13-14-ին 19-20-ին, 25-27-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:



Գծապատկեր 1. Տեղումներ, հունվար 2022

Առանձին օրեր առանձին վայրերում դիտվել է քամի 8-24մ/վ արագությամբ, պոռթկումների ժամանակ հասնելով 22-28մ/վ արագության:


Հունվարի 1-2-ին Արարատում դիտվել է ուժեղ մառախուղ 40մ տեսանելիությամբ, 11-ին Հրազդանում, Գյումրիում, 11-12-ին Արթիկում, 13-ին Արմավիրում՝ 50մ տեսանելիությամբ, առանձին օրեր առանձին վայրերում՝ 200-500մ տեսանելիությամբ:

Աղյուսակ 1. Վրանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2022թ. հունվար

| Մարզ / դիտակայան | Դիտման օրը(երը) | Երևույթի անվանումը | Բնութագիրը | Չափանիշը/Չափորոշիչը | Փաստացի |
|------------------|-----------------|--------------------|-----------------|---------------------|---------|
| Արթիկ/Շիրակ | 3 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50մ |
| Արարատ / Արարատ | 2 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 40մ |
| Հրազդան/Կոտայք | 1 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50մ |
| Գյումրի/Շիրակ | 1 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50մ |
| Արմավիր/Արմավիր | 1 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50մ |

Հունվարի 31-ի դրությամբ հանրապետությունում առավելագույն ձյան ծածկը կազմել է Արագած բ/լ-ում՝ 82սմ, Զերմուկում՝ 71սմ, Ամբերդում՝ 63սմ, Հրազդանում՝ 62սմ, Ապարանում՝ 48սմ, Ֆանտանում 47սմ, մնացած շրջաններում 0-30 սմ:


Ձյան ծածկի բարձրությունը ՀՀ-ում, հունվար 2022



Մթնոլորտի շրջանառությունը հունվարին


Հունվար ամսին մեր հանրապետության եղանակային պայմանները ձևավորել են մի քանի հիմնական սինոպտիկական պրոցեսներ:

Հունվարի 1-5-ին, 11-12-ին, 15-16-ին, 26-ին, 28-31-ին դիտված տեղումները պայմանավորված են եղել հետևյալ օդերևութաբանական պայմաններով: Այդ օրերին հյուսիսում՝ Իսլանդիայից Սկանդինավիա և մինչև Ուրալյան լեռներ ձգվող հզոր ցիկլոնների հարավային ծայրամասերը տարածվել են մինչև Սև ծովից Կասպից ծովի հյուսիսային շրջաններ:(նկ.1) Արևմուտքից ներթափանցող Արևմտաեվրոպական անտիցիկլոնի ներթափանցմամբ պայմանավորված մթնոլորտի երկրամերձ շերտում ձևավորվել է թույլ արտահայտված ճակատային գոտի, ինչով պայմանավորված ՀՀ առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ:




Նկ.1 Ճակատային գոտին երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա

ՔՏ 500 մակերևույթի քարտեզների վրա բարձր ցիկլոնի կենտրոնը գտնվում էր Արխանգելսկի շրջանում, լաժբինային առանցքը ձգվում էր մինչև Իրանի տարածք՝ Կասպից ծովի հարավարևմտյան շրջաններ: (նկ.2)



Նկ.2 Բարձր լաժբինի դիրքը ՔՏ 500մբ քարտեզի վրա

Առանձին օրեր՝ հունվարի 13-ին, 19-20-ին, 25-ին և 27-ին, տեղումները պայմանավորված են եղել միջերկրածովյան ցիկլոնների ներթափանցմամբ:(Նկ.3)



Նկ.3 Կիպրոսյան ցիկլոնի ամպամածության գոտին արբանյակային լուսանկարի վրա

(13.01.22. ժ 15.00)

ԲՏ 500 մակերևույթի վրա բարձրադիր լաժբինայի առանցքը ձգվում էր Ուրալյան լեռներից մինչև Եգիպտոս: ՀՀ տարածքը գտնվել է այդ լաժբինայի առանցքի առաջնային մասում՝ հարավարևմտյան հոսանքների գոտում:

Հունվարի 6-9-ին, 17-18-ին, 20-24-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Այդ օրերին ՀՀ տարածքը մթնոլորտի երկրամերձ շերտում գտնվել է Արևմտատեվրոպական, առանձին օրերին Լոկալ անտիցիկլոնային դաշտերի ազդեցության գոտում՝ կենտրոնում 1025-1035հՊա ճնշումով:


ԲՏ 500 մակերևույթի վրա ՀՀ տարածքը գտնվել է բավականին խորը բարձրադիր լաժբինայի ազդեցության գոտում, որի թիկունքային մասով հյուսիսարևմուտքից դիտվել է ցուրտ արկտիկական օդային հոսանքների ներխուժում և եղանակի պարզեցում, ինչով պայմանավորված 17-18-ին գիշերային ջերմաստիճանները նվազել են 5-12 աստիճանով, լեռնային շրջաններում հասնելով մինչև $-22... -26^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում և նրա նախալեռներում՝ $-10...-15^{\circ}\text{C}$ աստիճան ցրտի:

Առանձին օրերին, երբ հանրապետության տարածք հարավից դիտվել է տաք օդի աղվեկցիա, օդի ջերմաստիճանները բարձրացել են, Սյունիքի հովիտներում և Տավուշում հասնելով մինչև $+15...+18^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում՝ $+8...+10^{\circ}\text{C}$:

Փետրվար 2022թ.

Փետրվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում բարձր է եղել նորմայից 2-5, Լոռիում, Տավուշում և Սյունիքում՝ 2-3, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ 3-5 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում նորմայից բարձր է եղել 2-5, երկրորդ տասնօրյակում՝ 1-4, երրորդ տասնօրյակում՝ 4-7 աստիճանով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 9-30%, Վայոց ձորում՝ 73-94%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 29-40%, հովտային շրջաններում՝ 48, Շիրակում՝ 12-30%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 9-27%, նախալեռնային շրջաններում՝ 31%, Լոռիում՝ 4-29%, Գեղարքունիքում՝ 13-47%, Արմավիրում՝ 27%, Արարատում՝ 29-37%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 11-38%, լեռնային շրջաններում՝ 23-52%, Երևան քաղաքում՝ 18-46%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Փետրվարի 1-3-ին, 6-8-ին, 12-13-ին, 11-15-ին, 18-24, 27-28-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Փետրվարի 9-10-ին, 14-17-ին, 25-26-ին՝ առանձին շրջաններում, 4-5-ին, 11-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:



Գժապարկեր 2. Տեղումներ, փետրվար 2022

Առանձին օրերին առանձին վայրերում դիտվել է քամի՝ 10-15մ/վ արագությամբ, պողոթումների ժամանակ հասնելով՝ 15-21մ/վ արագության:

Փետրվարի 11-ին՝ Ջերմուկում դիտվել է ուժեղ ձյուն 29,6մմ քանակությամբ:


Փետրվարի 4-ին՝ Ֆանտանում, 10-ին՝ Գորիսում, 18-ին՝ Արթիկում դիտվել է մառախուղ 50մ տեսանելիությամբ:

Աղյուսակ 2. Վրանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2022թ. Փետրվար

| Մարզ / օդերևութաբանական կայան | Դիտման օրը(երը) | Երևույթի անվանումը | Բնութագիրը | Չափանիշը/Չափ որոշիչը | Փաստացի |
|-------------------------------|-----------------|--------------------|-----------------|----------------------|---------|
| Կոտայք/Ֆանտան | 4 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50 |
| Սյունիք/Գորիս | 10 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50 |
| Վայոց ձոր/Ջերմուկ | 11 | ուժեղ ձյուն | ինտենսիվություն | ≥20մմ/12ժամ | 29,6 |
| Շիրակ/Արթիկ | 18 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50 |


Փետրվարի 28-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկը կազմել է Արագած Բ/լ-ում՝ 85սմ, Ջերմուկում՝ 53սմ, Ամբերդում՝ 43սմ, Հրազդանում՝ 41սմ, Ամասիայում՝ 29սմ, Սեմյոնովկայում, Ֆանտանում, Աշոցքում և Ապարանում 11-15սմ, մնացած շրջաններում 6-7սմ: Արարատյան դաշտում և նրա նախալեռներում, Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայել է:

Ձյան ծածկի բարձրությունը ՀՀ-ում, փետրվար 2022




Մթնոլորտի շրջանառությունը փետրվարին

Փետրվարն աչքի է ընկել իր չոր և բավականին բարձր ջերմային ֆոնով: Ողջ ամսվա ընթացում գերակշռել է անտիցիկլոնային դաշտով պայմանավորված առանց տեղումների եղանակ: Հատկապես փետրվարի երրորդ տասնօրյակում՝ հարավից արևադարձային տաք օդային հոսանքների ներթափանցմամբ պայմանավորված, դիտվել է օդի ջերմաստիճանի բարձրացում: Փետրվարի 23-24-ին Սյունիքի և Տավուշի հովիտներում օդի առավելագույն ջերմաստիճանը բարձրացել է՝ հասնելով +19...+22°C, Արարատյան դաշտում՝ +15...+18°C: Օդի ամսական միջին ջերմաստիճանն այդ օրերին նորմայից բարձ է եղել 3-6 աստիճանով: (նկ. 4)




Նկ.4 Անտիցիկլոնային դաշտը մթնոլորտի երկրամեծ սինօպտիկական քարտեզի վրա

Առանձին օրեր առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Փետրվարի 4-5-ին տեղումները պայմանավորված են եղել Սև ծովի շրջաններից ցիկլոնի, 10-11-ին Արևմտաեվրոպական անտիցիկլոնի առաջնային մասով ցուրտ մթնոլորտային ճակատի (նկ. 5, 7), 26-ին՝ Կիպրոսյան ցիկլոնի ներթափանցմամբ: Փետրվարի 14-16-ին արևելյան շրջաններում տեղումներ դիտվել են արևելյան պրոցեսով պայմանավորված:




Նկ.5 Յուրդ ճակատի ացնումը երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա

ՔՏ 500մբ քարտեզի վրա բարձր լաժբինայի առանցքը ձգվում էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, որի մեջ առկա էր երկու իզոհիպսով արտահայտված բարձր ցիկլոն, կենտրոնը գտվում էր Կիպրոսի տարածքում: ՀՀ տարածքը գտնվել է այդ լաժբինայի առաջնային մասում, որը փետրվարի 10-11-ին շարժվել է արևելք՝ ընդգրկելով մեր տարածաշրջանը: (նկ.6)



Նկ.6 Բարձր ցիկլոնի կենտրոնը ՔՏ 500մբ մակերևույթի քարտեզի վրա




**Նկ.7 Ցուրդ ճակատի ամպամածության գործին
արբանյակային լուսանկարի վրա (10.02.22 ժ 14.00)**

Մարտ 2022թ.

Մարտին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում ցածր է եղել նորմայից 1-2, Լոռիում և Տավուշում՝ 2-3 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում բարձր է եղել 1-3, երկրորդ և երրորդ տասնօրյակներում ցածր՝ 2-4 աստիճանով:


Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 167-185%, Վայոց ձորում՝ 118-153%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 129-137%, հովտային շրջաններում՝ 27%, Շիրակում՝ 117-210%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 171-182%, նախալեռնային շրջաններում՝ 100%, Լոռիում՝ 170-257%, Գեղարքունիքում՝ 80-228%, Արմավիրում՝ 102%, Արարատում՝ 60-113%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 154-172%, լեռնային շրջաններում՝ 171-209%, Երևան քաղաքում՝ 74-119%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Մարտի 1-ին, 5-6-ին, 8-ին, 16-17-ին, 25-31-ին՝ առանձին շրջաններում, 2-4-ին, 9-15-ին, 18-24-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Մարտի 7-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:



Գծապատկեր 3. Տեղումներ, մարտ 2022

Առանձին օրերին առանձին վայրերում դիտվել է քամի՝ 8-18մ/վ արագությամբ, պողոթնումների ժամանակ հասնելով՝ 15-23մ/վ արագության: Մարտի 4-ին Արենիում դիտվել է ուժեղ քամի՝ 25մ/վ արագությամբ:

Մարտի 4-ին Ապարանում դիտվել է ուժեղ անձրև՝ 36,3 մմ:


Աղյուսակ 3. Վերանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2022թ. մարտ

| Մարզ / դիտակայան | Դիտման օրը(երը) | Երևույթի անվանումը | Բնութագիրը | Չափանիշը/Չափորոշիչը | Փաստացի |
|------------------|-----------------|--------------------|-----------------|---------------------|---------|
| Լոռի/Ստեփանավան | 3 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50 |
| Արագածոտն/Ապարան | 4 | ուժեղ անձրև | ինտենսիվություն | ≥30մմ/12ժամում | 36.3 |
| Վայոց ձոր/Արենի | 4 | ուժեղ քամի | արագություն | ≥25մ/վ | 25 |

Մարտի 31-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկը կազմել է Արագած բ/լ-ում՝ 194սմ, Զերմուկում՝ 62սմ, Ապարան լճայինում՝ 57սմ, Հրազդանում՝ 49սմ, Ամասիայում՝ 40սմ, Սեմյոնովկայում՝ 37սմ, Անանուն լեռնանցքում և Ապարանում՝ 34սմ, Աշոցքում՝ 30սմ, Ստեփանավանում՝ 20սմ, մնացած շրջաններում 2-19սմ:


Մթնոլորտի շրջանառությունը մարտին

Հանրապետության տարածքը մարտի սկզբին գտնվել է արևմուտքից, հարավ-արևմուտքից, հարավից շարունակաբար ներթափանցող ցիկլոնների ազդեցության գոտում, ինչով պայմանավորված ողջ ամսվա ընթացքում դիտվել է տեղումնառատ, բավականին ցածր ջերմային ֆոնով եղանակ:(նկ.8) Երկրորդ և երրորդ տասնօրյակի ընթացքում առանձին օրերին դիտվել են մերձբևեռային ցուրտ օդային հոսանքների երկկողմանի ներխուժումներ՝ Սև և Կասպից ծովի շրջաններից:



Նկ.8 Ցիկլոնային դաշտի ազդեցությունը երկրամերձ սինօպտիկական քարտեզի վրա

Մարտի 4-ին հանրապետության ողջ տարածքում դիտվել են տեղումներ, առանձին վայրերում՝ ինտենսիվ: Ապարանում 12 ժամվա ընթացքում դիտվել է 36մմ անձրև(նկ.9):




Նկ.9 Ցիկլոնին հետ կապված ամպամածության գոտին արբանյակային լուսանկարի վրա (04.03.2022թ. ժ. 03:00)

Մարտի 9-ից սկսած Բարենցի և Կարայի շրջաններից հանրապետության տարածք ներթափանցած արկտիկական ցուրտ օդային հոսանքներով պայմանավորված Լոռիում, Տավուշում, Սյունիքի նախալեռնային շրջաններում ձևավորվել է կայուն ձնածածկույթ: Մարտի

15-ին, 20-ին, 21-ին, 24-ին ձյան ծածկ ձևավորվել է նաև Արարատյան դաշտում և նրա նախալեռնային շրջաններում: Ձյան ծածկը շարունակում էր ավելանալ լեռնային շրջաններում:


Գրեթե ողջ մարտ ամսվա ընթացքում տեղումները և ցածր ջերմային ֆոնը պահպանվել է, մարտի վերջին ցիկլոնային գործունեությունը զգալի թուլացել է և դիտվել տեղումների զգալի թուլացում:

ՔՏ 500մբ մակերևութի քարտեզի վրա մեր տարածքում գերակշռել են հորիզոնական մեծ գրադիենտներով արտահայտված հորիզոնական դիրքադրությամբ ճակատային գոտիներ (նկ.10):



Նկ.10 Բարձր ցիկլոնը ՔՏ 500մբ թերմոբարիկական քարտեզի վրա

Ձյան ծածկը Արագած բ/լ-ում երրորդ տասնօրյակի սկզբին կազմել է 247սմ, մնացած լեռնային շրջաններում առավելագույնը՝ 75-120սմ:




Նկ.11 Ցիկլոնին համապարասխան ամպամածության գոտին արբանյակային լուսանկարի վրա(19.03.2022թ, ժ. 22:00)

Ապրիլ 2022թ.

Ապրիլին օդի միջին ամսական ջերմաստիճանը Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում, Լոռիում, Տավուշում, Արարատում, Արմավիրում բարձր է եղել նորմայից 2-3, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքում՝ 3-4 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում նորմայից բարձր է եղել 2-4 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական ու բացասական շեղումներով, երրորդ տասնօրյակում բարձր է եղել 3-5 աստիճանով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 31-56%, Վայոց ձորում՝ 28-41%, Սյունիքում՝ նախալեռային շրջաններում՝ 23-42%, հովտային շրջաններում՝ 33%, Շիրակում՝ 41-96%, Կոտայքում լեռնային շրջաններում՝ 44-89%, նախալեռային շրջաններում՝ 41%, Լոռիում՝ 55-76%, Գեղարքունիքում՝ 20-62%, Արմավիրում՝ 61%, Արարատում՝ 28-60%, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 37-68%, նախալեռային շրջաններում՝ 25-45%, , Երևան քաղաքում՝ 22-42%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Ապրիլի 1-5-ին, 10-12-ին, 14-19-ին, 21-24-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Ապրիլի 6-9-ին, 13-ին, 28-30-ին՝ շրջանների զգալի մասում, 20-ի ցերեկը, 25-27-ին՝ առանձին շրջաններում դիտվել են տեղումներ:



Գծապատկեր 4. Տեղումներ, ապրիլ 2022

Առանձին վայրերում առանձին օրերին դիտվել է քամի՝ 10-15մ/վ արագությամբ, պողպուսների ժամանակ հասնելով մինչև 25-30մ/վ արագության:

Ապրիլի 8-ին Արթիկում դիտվել է մառախուղ 50մ տեսանելիությամբ:

Աղյուսակ 4. Վրանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2022թ. հունվար


| Մարզ / դիտակայան | Դիտման օրը(երը) | Երևույթի անվանումը | Բնութագիրը | Չափանիշը/Չափորոշիչը | Փաստացի |
|----------------------|-----------------|--------------------|-----------------|---------------------|---------|
| Շիրակ/Արթիկ | 8 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≥50մ | 50մ |
| Գեղարքունիք/Մարտունի | 12 | ուժեղ քամի | արագություն | ≥25մ/վ | 25մ/վ |
| Վայոց ձոր/Արենի | 12 | ուժեղ քամի | արագություն | ≥25մ/վ | 26մ/վ |
| Տավուշ/Իջևան | 20 | ուժեղ քամի | արագություն | ≥25մ/վ | 30մ/վ |
| Շիրակ/Արթիկ | 8 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≥50մ | 50մ |

Ապրիլի 30-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվել է 2500 մ և ավելի բարձրություններում:


Մթնոլորտի շրջանառությունն ապրիլին

Ապրիլին գրեթե ողջ ամսվա ընթացքում անտիցիկլոնային դաշտով պայմանավորված դիտվել է առանց տեղումների եղանակ (նկ.12): Գերակշռել են հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից (Իրաքի և Իրանի տարածքից) արևադարձային տաք օդային հոսանքերը (նկ.13), դիտվել են տաք և խիստ չոր եղանակային պայմաններ:

Ապրիլի սկզբին և երրորդ տասնօրյակում օդի առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի և Տավուշի հովիտներում գրանցվել է $+30...+33^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում, նրա նախալեռնային շրջաններում՝ $+28...+30^{\circ}\text{C}$: Այդ օրերին օդի օրական միջին ջերմաստիճանը նորմայից բարձր է եղել 6-9 աստիճանով:




Նկ.12 Անտիցիկլոնի կենտրոնը երկրամերձ սինօպտիկական քարտեզի վրա




Նկ.13 Հարավարևմտյան շիթային հոսանքները PS 500 քարտեզի վրա

Առանձին օրերին դիտվել են տեղումներ՝ ապրիլի 7-9-ին, 20-ին, 28-30-ին արևմուտքից և հարավից ցիկլոնների ներթափանցմամբ, 13-ին Արևմտյան ցիկլոնի թիկունքում Սկանդինավյան անտիցիկլոնի կատարի առաջնային մասում ցուրտ մթնոլորտային ճակատի անցմամբ պայմանավորված(նկ.14):

Ապրիլի 13-ին՝ ցուրտ ճակատի անցմամբ պայմանավորված՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, ջերմաստիճանի նվազում՝ 10-15 աստիճան և ուժեղ քամիներ՝ պոռթկումների ժամանակ 25-30մ/վրկ արագությամբ (նկ 15):



Նկ.14 Ցուրտ ճակատի դիրքը երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա




Նկ.15 Ցուրտ ճակատի հետ կապված ամպամածության գոյին արբանյակային լուսանկարի վրա (13.04.2022թ. ժ.14.00)

Մայիս 2022թ.

Մայիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում ցածր է եղել նորմայից 1-1,5 աստիճանով, Արարատում, Արմավիրում և Սյունիքի հովիտներում նորմայի սահմաններում՝ մի փոքր բացասական շեղումով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանը երեք տասնօրյակներում շրջանների զգալի մասում նորմայից ցածր է եղել 1-2 աստիճանով, Արարատում, Արմավիրում և Երևանում եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր բացասական շեղումներով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 63-111%, Վայոց ձորում՝ 60-91%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 112-122%, հովտային շրջաններում՝ 65-87%, Շիրակում՝ 67-128%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 91-94%, նախալեռնային շրջաններում՝ 108%, Լոռիում՝ 71-106%, Գեղարքունիքում՝ 40-130%, Արմավիրում՝ 51%, Արարատում՝ 80-109%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 47-67%, լեռնային շրջաններում՝ 51-73%, Երևան քաղաքում՝ 81-100%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Մայիսի 1-8-ին, 12-13-ին, 16-ին, 20-ին, 23-25-ին շրջանների զգալի մասում, 9-11-ին, 15-ին, 18-19-ին, 21-ին, 29-31-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ:

Մայիսի 14-ին, 17-ին, 20-ին, 22-ին, 26-28-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:



Փժապարկեր 5. Տեղումներ, մայիս 2022

Մայիսի 16-ին՝ Թալինում, 20-ին՝ Գորիսում դիտվել է ուժեղ մառախուղ՝ 40-50մ տեսանելիությամբ: Մայիսի 20-ին և 23-ին հանրապետության շրջանների զգալի մասում դիտվել է քամու ուժգնացում, պողոթյունների ժամանակ հասնելով մինչև 18-23մ/վրկ արագության (Բագրատաշեն՝ 27մ/վրկ): Մայիսի 23-ին առանձին շրջաններում դիտվել է նաև կարկուտ՝ 10-18մմ տրամագծով:

Աղյուսակ 5. Վրանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2022թ. Մայիս


| Մարզ / դիտակայան | Դիտման օրը(երը) | Երևույթի անվանումը | Բնութագիրը | Չափանիշը/Չափորոշիչը | Փաստացի |
|-------------------|-----------------|--------------------|-----------------|---------------------|---------|
| Արագածոտն/Թալին | 16 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 50մ |
| Սյունիք/Գորիս | 20 | ուժեղ մառախուղ | տեսանելիություն | ≤50մ | 40մ |
| Տավուշ/Բագրատաշեն | 23 | ուժեղ քամի | արագություն | ≥25մ/վրկ | 27մ/վրկ |

Մթնոլորտի շրջանառությունը մայիսին

Մայիսին ցիկլոնային և անտիցիկլոնային գործունեությունը սկսում է թուլանալ՝ իր տեղը զիջելով անկայուն բարիկական դաշտերին: Այս բարիկական դաշտերի ազդեցությամբ ակտիվանում են ներզանգվածային պրոցեսները:


Գրեթե ողջ ամսվա ընթացքում դիտվել են տեղումները, որոնք պայմանավորված են եղել հետևյալ սինօպտիկական իրադրությամբ:

Մթնոլորտի երկրամերձ շերտում գերակայում էր՝ հյուսիսում՝ Ռուսաստանի եվրոպական մասում, ստացիոնար անտիցիկլոնը, հարավում՝ Ջերմային ցիկլոնը: Այս երկու բարիկական դաշտերի շփման գոտում ձևավորվել էր արևմուտքից արևելք ձգվող հորիզոնական դիրքադրությամբ ստացիոնար ճակատային գոտի: Առանձին օրերին Սկանդինավյան, Արևմտաեվրոպական անտիցիկլոնների առաջնային մասով ցուրդ օդային հոսանքների ներթափանցմամբ պայմանավորված դիտվում էր ճակատային գոտու սրացումներ՝ ալիքային բարձրացումներով(նկ.16):



Նկ.16 Սպացիոնար ճակատի դիրքը երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա

Ստեղծված պայմաններում կեսօրից հետո արոցեսներն ակտիվանում էին ակտիվ ներզանգվածային կոնվեկտիվ հոսանքների արդյունքում(նկ.17): Հատկապես օրվա երկրորդ կեսին և երեկոյան դիտվում էին ներզանգվածային բնույթի տեղումներ, առանձին վայերում՝ ամպրոպ և կարկուտ: Մասնավորապես առատ տեղումներ դիտվել են ամսվա առաջին տասնօրյակում, մայիսի 12-ին, 16-ին, 20-ին, 23-25-ին:




Նկ.17 Ներզանգվածային բուռն զարգացումը արբանյակային լուսանկարի վրա (07.05.2022 ժ.14.00)

Առանձին օրերին տեղումները պայմանավորված են եղել ցուրտ մթնոլորտային ճակատների անցմամբ:


Մայիսի 10-ի գիշերը, արկտիկական ցուրտ օդի ներթափանցմամբ պայմանավորված, առանձին լեռնային շրջաններում տեղումները դիտվել են ձյան տեսքով:

Մայիսի 23-ին հանրապետության տարածքը գտնվում էր ցուրտ ճակատի անցման գոտում, որին բարձր մակերևույթների վրա համապատասխանում էր բարձր լաժբինայի առաջնային մասը(նկ.18): Կեսօրից հետո դիտվել են հզոր կոնվեկտիվ շարժումներ

հանրապետության հյուսիսային և կենտրոնական շրջաններում(նկ.19): Առանձին վայրերում դիտվել է կարկուտ և քամու ուժգնացում մինչև 20-25մ/վրկ արագությամբ:



Նկ.18 Բարձր լաժրինայի դիրքը ՔՏ 500 թերմոբարիկական քարտեզի վրա




Նկ.19 Հզոր կոնվեկտիվ ամպամածությունը արբանյակային լուսանկարի վրա(23.05.2022 ժ 15.00)

Մայիսի 26-ից արդեն դիտվել է եղանակի զգալի կայունացում, գերակշռել է հարավից արևադարձային տաք օդային հոսանքների ներթափանցումը: Այդ օրերին օդի ջերմաստիճանը հովտային շրջաններում բարձրացել է մինչև +30...+33, լեռնային շրջաններում՝ +20...+25 աստիճան:

Հունիս 2022թ.

Հունիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում բարձր է եղել նորմայից 3-5, երկրորդ և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայի սահմաններում՝ դրական ու բացասական շեղումներով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 90-108%, Վայոց ձորում՝ 43-60%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 64-91%, հովտային շրջաններում՝ 50%, Շիրակում՝ 80-124%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 71-89%, նախալեռնային շրջաններում՝ 85%, Լոռիում՝ 76-159%, Գեղարքունիքում՝ 74-140%, Արմավիրում՝ 57%, Արարատում՝ 43-87%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 75-80%, լեռնային շրջաններում՝ 87-117%, Երևան քաղաքում՝ 54-83%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Հունիսի 5-6-ին, 8-9-ին, 15-18-ին, 20-ին, 27-29 առանձին շրջաններում, 10-14-ին, 22-26-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Հունիսի 1-4-ին, 7-ին, 19-ին, 21-ին, 30-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:



Գծապարկեր 6. Տեղումներ, հունիս 2022

Հունիսի 1-ին՝ Եղվարդում, 4-ին՝ Արթիկում դիտվել է ուժեղ քամի՝ պողոթյունների ժամանակ հասնելով մինչև 25- 28մ/վ արագության:

Հունիսի 1-ին Տաշիրում (19մմ), Սեմյոնովկայում (20մմ), 10-ին՝ Տաշիրում (21մմ) դիտվել է կարկուտ:

Հունիսի 7-ին Ստեփանավանում դիտվել է ուժեղ անձրև 39 մմ քանակությամբ:


Աղյուսակ 6. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2022թ. հունիս

| Մարզ / դիտակայան | Դիտման օրը(երը) | Երևույթի անվանումը | Բնութագիրը | Չափանիշը/Չափորոշիչը | Փաստացի |
|------------------------|-----------------|--------------------|-----------------|---------------------|---------|
| Կոտայք/Եղվարդ | 1 | ուժեղ քամի | արագություն | ≥25մ/վ | 28մ/վ |
| Գեղարքունիք/Սեմյոնովկա | 1 | ուժեղ կարկուտ | տրամագիծ | ≥20մմ | 20մմ |
| Շիրակ/Արթիկ | 4 | ուժեղ քամի | արագություն | ≥25մ/վ | 28մ/վ |
| Լոռի/Ստեփանավան | 7 | ուժեղ անձրև | ինտենսիվություն | ≥30մմ/12ժամ | 39,4մմ |
| Լոռի/Տաշիր | 10 | ուժեղ կարկուտ | տրամագիծ | ≥20մմ | 21մմ |

Մթնոլորտի շրջանառությունը հունիսին


Հանրապետության տարածքը հունիս ամսին դեռևս շարունակել է գտնվել թույլ արտահայտված անկայուն բարիկական դաշտերի ազդեցության գոտում:

ՀՀ տարածքը մթնոլորտի երկրամերձ շերտում գտնվել է հյուսիս-արևմուտքից, հյուսիսից՝ անտիցիկլոնային դաշտի, հարավից՝ Ջերմային դեպրեսիայի շփման գոտում (նկ.20): Ձևավորված ճակատային գոտում դիտվել են ներգանգվածային կոնվեկտիվ ամպամածության զարգացում, կարճատև, հորդառատ բնույթի տեղումներ, առանձին օրերին՝ կարկուտ: Ամպրոպներն ուղեկցվել են քամու ուժգնացմամբ՝ 15-23մ/վրկ, երբեմն պողոթյունների ժամանակ հասնելով 24-28մ/վրկ արագության:




Նկ.20 Ճակատային գոտին երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա

ՔՏ 500մբ մակերևույթների վրա ՀՀ տարածքը գտնվել է թույլ արտահայտված բարձր լաժբինայի առաջնային մասում, կամ հորիզոնական դիրքադրությամբ իզոհիպսերի խտացմամբ արտահայտված ճակատային գոտում (նկ.21):



Նկ.21 Բարիկական դաշտը PS 500մբ քարտեզի վրա

Առանձին օրերին Արևմտաեվրոպական և Սկանդինավյան անտիցիկլոնների ակտիվացմամբ պայմանավորված դիտվել են ճակատային գոտու սրացումներ՝ ալիքային բարձրացումներով: Առանձին վայրերում դիտվել են ինտենսիվ, ամպրոպային բնույթի անձրևներ, կարկուտ (հունիսի 1-ին, 7-ին, 9-15-ին, 22-26-ին) (նկ. 22):




Նկ.22 Ներգանգվածային բնույթի կոնվեկտիվ ամպամածության պատկերը արբանյակային լուսանկարի վրա (09.06.22 ժ. 16:00)

Հուլիս 2022թ.

Հուլիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում, Արարատյան դաշտում, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Երևանում՝ բարձր է եղել 1-2 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական ու բացասական շեղումով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր 2-4 աստիճանով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 7-15%, Վայոց ձորում՝ 15-36%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 1-23%, հովտային շրջաններում՝ 31%, Շիրակում՝ 24-34%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 1%, Լոռիում՝ 17-30%, Գեղարքունիքում՝ 10-36%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 1%, լեռնային շրջաններում՝ 26-62%, Երևան քաղաքում՝ 5%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Հուլիսի 1-2-ի ցերեկը, 7-10-ին, 30-ի ցերեկը, 31-ին՝ առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ:

Հուլիսի 4-6-ին, 11-29-ին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:




Գծապատկեր 7. Տեղումներ, հուլիս 2022

Առանձին վայրերում առանձին օրերին դիտվել է քամու ուժգնացում՝ 10-15մ/վ, պողոթումների ժամանակ՝ մինչև 18-22մ/վ արագությամբ, որը կրել է լեռնահովտային բնույթ:


Մթնոլորտի շրջանառությունը հուլիսին

Հանրապետության տարածքը հուլիս ամսին հիմնականում գտնվել է հարավից ներթափանցող արևադարձային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում (նկ.23), որով պայմանավորված՝ ողջ ամսվա ընթացքում դիտվել է չոր և բավականին բարձր ջերմային ֆոնով եղանակ: Հատկապես, հուլիսի 15-19-ին՝ Իրաքի և Իրանի տարածքից արևադարձային տաք օդային հոսանքների ներթափանցման արդյունքում դիտվել են սաստիկ շոգեք: Արարատյան դաշտում օդի ջերմաստիճանը հասել է +41°C-ի:



Նկ.23 Ջերմային դեպրեսիայի ազդեցությունը երկրամերձ սինոպտիկական քարտեզի վրա


Հարավից ներթափանցող արևադարձային տաք օդային հոսանքներն ընդգրկում էր ոչ միայն մթնոլորտի ստորին շերտերը, այլ նաև տարածվում տրոպոսֆերայի մինչև 5-7կմ բարձրությունները՝ բարձր ջերմային ֆոն առաջացնելով նաև հանրապետության լեռնային մարզերի համար (նկ. 24):



Նկ.24 Ջերմային կադար PS500մբ քարտեզի վրա

Առանձին օրերին արևադարձային տաք օդի ալիքը նահանջում էր դեպի հարավ՝ իր տեղը զիջելով Արևմտյան Եվրոպայից և Սկանդինավյան թերակղզուց ներթափանցող բարեխառն օդային զանգվածներին, որոնք առանձին վայրերում առաջացնում էր կոնվեկտիվ շարժումներ, առաջացնելով ամպրոպային բնույթի կարճատև անձրևներ (հուլիսի 2-ը, 21-22-ը և 31-ը):

Առանձին օրեր, երբ արևադարձային տաք օդի ներհոսքը նկատվում էր Իրաքի անապատային շրջաններից, այդ օդային զանգվածները հանրապետության տարածք էին տեղափոխում նաև փոշու մեծ կոնցենտրացիա ունեցող օդ, որը հստակ երևում է արբանյակային լուսանկարի վրա (նկ. 25):




Նկ.25 Արևադարձային փառ օդային հոսանքների ներթափանցումը արբանյակային լուսանկարի վրա (16.07.22 ժ. 16:00)

Օգոստոս 2022թ.

Օգոստոսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով, Լոռիում և Տավուշում նորմայի սահմաններում՝ դրական շեղումներով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական և բացասական շեղումներով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում՝ նորմայից բարձր 1-3 աստիճանով:


Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 10-56%, Վայոց ձորում՝ 56%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 20-70%, հովտային շրջաններում՝ 69%, Շիրակում՝ 11-87%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 2-47%, նախալեռնային շրջաններում՝ 0%, Լոռիում՝ 8-90%, Գեղարքունիքում՝ 7-90%, Արմավիրում՝ 6%, Արարատում՝ 2-18%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 5-36%, լեռնային շրջաններում՝ 5-60%, Երևան քաղաքում՝ 5%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Օգոստոս 1-9-ին առանձին շրջաններում դիտվել է կարճատև անձրև և ամպրոպ:
 Օգոստոս 10-20-ին, 21-31-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:




Գծապարկեր 8. Տեղումներ, օգոստոս 2022

Ողջ ամսվա ընթացքում Արմավիրում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռնային շրջաններում երեկոյան ժամերին դիտվել է քանու ուժգնացում մինչև 18-22մ/վրկ արագությամբ: Օգոստոսի 14-19-ին, 25-27-ին, 28-31-ին շրջանների զգալի մասում դիտվել են սաստիկ շոգեր:


Մթնոլորտի շրջանառությունը օգոստոսին

Հանրապետության տարածքն օգոստոսին շարունակել է գտնվել արևադարձային տաք օդային հոսանքի ազդեցության գոտում, գերակշռել է պարզ և շոգ եղանակը: Օգոստոսի առաջին տասնօրյակը համեմատաբար ավելի խոնավ էր: Դա պայմանավորված էր նրանով, որ ՀՀ տարածքը գտնվել է հյուսիսից Սկանդինավյան անտիցիկլոնի առաջնային մասում՝ համեմատաբար ցուրտ օդային հոսանքների, իսկ հարավից՝ Իրաքի տարածքից արևադարձային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում, ինչով պայմանավորված առաջացել է ստացիոնար ճակատային գոտի (նկ.26):




Նկ.26 Ճակատային գոտին գերնամերձ սինոպտիկական քարտեզի վրա

Բարձր մակերևույթի 500մբ քարտեզի վրա (նկ.27) երևում է Սև ծովի վրա ձևավորված բարձր ցիկլոնը, ինչով պայմանավորված, մասնավորապես օգոստոսի 1-8-ին հանրապետության առանձին շրջաններում դիտվել են ամպրոպային բնույթի կարճատև անձրևներ:




Նկ.27 Սև ծովի արևմտյան ափերին գտնվող բարձր ցիկլոնը ԲՏ500մբ մակերևույթի բարիկական քարտեզի վրա

Առանձին օրերին տեղումները ինտենսիվ են եղել հանրապետության առավելապես հյուսիսային շրջաններում(նկ.28): Արարատյան դաշտում և նրա նախալեռներում տեղումները չեն գերազանցել 1մմ-ը:



Նկ.28 Կոնվեկտիվ ամպամածությունը արբանյակային լուսանկարի վրա (08.08.2022 ժ 16:00)

Օգոստոսի 10-ից հանրապետության տարածքը գտնվում էր հարավից Ջերմային դեպրեսիայի՝ արևադարձային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում: Այն իր առավելագույն զարգացմանն էր հասել օգոստոսի 15-18-ին (նկ.29), երբ Արարատյան դաշտում և նրա նախալեռնային շրջաններում դիտվել են $+39\dots+41^{\circ}\text{C}$: Օգոստոսի երկրորդ և երրորդ տասնօրյակների ընթացքում հաստատվել էր չոր և շոգ եղանակ:




Նկ.29 Ջերմային ցիկլոնի դիրքը գեղնամերձ սինոպտիկական քարտեզի վրա

Սեպտեմբեր 2022թ.

Սեպտեմբերին ողջ հանրապետությունում օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանը բոլոր երեք տասնօրյակներում բարձր է եղել նորմայից 1-3 աստիճանով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 79-110%, Վայոց ձորում՝ 15-62%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 41%, հովտային շրջաններում՝ 4%, Շիրակում՝ 79-134%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 34-43%, նախալեռնային շրջաններում՝ 50%, Լոռիում՝ 66-121%, Գեղարքունիքում՝ 2-115%, Արմավիրում՝ 81%, Արարատում՝ 11-50%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 24-111%, լեռնային շրջաններում՝ 60-96%, Երևան քաղաքում՝ 15-44%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Սեպտեմբերի 1-5-ին, 9-21-ին, 24-ին, 26-30-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Սեպտեմբերի 6-8-ին, 22-23-ին, 25-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ:



Գծապատկեր 9. Տեղումներ, սեպտեմբեր 2022


Սեպտեմբերի 21-22-ին հանրապետության առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում՝ պողոթյունների ժամանակ հասնելով մինչև 18-22մ/վրկ արագության:

Սեպտեմբերի 7-ին դիտվել է ուժեղ անձրև Ստեփանավանում՝ 34,2մմ և Տաշիրում՝ 31,2մմ քանակությամբ:

Սեպտեմբերի 1-4-ին սաստիկ շոգերը պահպանվել են:


Մթնոլորտի շրջանառությունը սեպտեմբերին

« տարածքը սեպտեմբերի 1-4-ին շարունակում էր գտնվել Ջերմային ցիկլոնի՝ արևադարձային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում, ինչով պայմանավորված Սյունիքի հովտային շրջաններում օդի ջերմաստիճանը տատանվում էր +39...+41°C, Արարատյան դաշտում՝ +39...+40°C սահմաններում (նկ. 30):




Նկ.30 Ջերմային ցիկլոնը գերմամերձ սինօպտիկական քարտեզի վրա

Սեպտեմբերի 7-ի գիշերը Սկանդինավյան անտիցիկլոնի առաջնային մասով, ցուրտ ճակատի անցմամբ պայմանավորված հյուսիսային շրջաններում դիտվել են օդի ուժգին վերընթաց շարժումներ (նկ 31), ինչի հետևանքով հանրապետության հատկապես հյուսիսային շրջաններում դիտվել են ինտենսիվ տեղումներ՝ 10-23մմ (Տաշիր, Ստեփանավան 32-35մմ):



Նկ.31 Ճակատային գոտին գեղնամերձ սինոպտիկական քարտեզի վրա


FS 500 քարտեզի վրա բարձր ցիկլոնը գտնվում է Արևմտյան Սիբիրի տարածքում, որի բարձր լաժբինան հասնում է մինչև մեր տարածաշրջան: Հարավային օդային հոսանքները փոխարինվել են հյուսիս-արևմտյանով և դիտվում էր ցուրտ օդի աղվեցիա (նկ. 32):




Նկ.32 Բարձր ցիկլոն FS500մբ քարտեզի վրա

Սեպտեմբերի 9-ին դիտվել է եղանակի կայունացում, հարավից արևադարձային տաք օդային հոսանքերի ակտիվացմամբ պայմանավորված՝ ջերմաստիճանի բարձրացում: Բարձր ջերմային ֆոնը և առանց տեղումների եղանակը պահպանվել է մինչև սեպտեմբերի 21-ը:

Սեպտեմբերի 22-23-ին Կիպրոսի տարածքում ձևավորված ցիկլոնի ազդեցությամբ առանձին վայերում դիտվել է անձրև և ամպրոպ(նկ. 33,34):



Նկ.33 Ցիկլոնի կենտրոնը գեյտամերձ սինոպտիկական քարտեզի վրա




Նկ.34 Ցիկլոնի հետ կապված ամպամածությունը արբանյակային լուսանկարի վրա(22.09.2022թ.)

Հոկտեմբեր 2022թ.

Հոկտեմբերին հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 0,5-1 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում բարձր է եղել նորմայից 2-5 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական ու բացասական շեղումներով:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից


Ամսական տեղումների քանակը Տավուշում կազմել է նորմայի 50-100%, Վայոց ձորում՝ 52-62%, Սյունիքում՝ 40-80%, Շիրակում՝ 90-95% (Ամասիա՝ 50%), Կոտայքում՝ 46-68%, Լոռիում՝ 71-88% (Ստեփանավան՝ 117%), Գեղարքունիքում՝ 50-100%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 50-70%, լեռնային շրջաններում՝ 40-45%, Արարատյան դաշտում՝ 54-66% (Արտաշատ՝ 95), Երևան քաղաքում՝ 57-79%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Հոկտեմբերի 1-8-ին, 11-13-ին, 22-24-ին հանրապետությունում դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Հոկտեմբերի 9-10-ին, 21-ին դիտվել է անձրև և ամպրոպ:




Գծապարկեր 10. Տեղումներ, հոկտեմբեր 2022թ.

Ողջ ամսվա ընթացքում հանրապետության առանձին շրջաններում առանձին օրերին դիտվել է մառախուղ մինչև 300-500մ տեսանելիությամբ:

Մթնոլորտի շրջանառությունը հոկտեմբերին


Հոկտեմբերի առաջին տասնօրյակին, արևադարձային տաք օդային հոսանքների ներթափանցմամբ պայմանավորված, դիտվել է անոմալ տաք և չոր եղանակ (նկ. 35): Օդի առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտում և նրա նախալեռներում, Սյունիքի հովիտներում բարձրացել է մինչև +32...+34°C աստիճան: Այդ օրերին միջին օրական ջերմաստիճանը նորմայից բարձր է եղել 5-9 աստիճանով:




Նկ.35 Տաք օդի կարարը PS 500մբ մակերևույթի բարիկական քարտեզի վրա

Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակից սկսած, բարեխառն և արևադարձային լայնությունների միջև աստիճանաբար ջերմաստիճանի հորիզոնական գրադիենտների մեծացմամբ պայմանավորված, ակտիվացել է ցիկլոնային և անտիցիկլոնային դաշտերի զարգացումը:

Առանձին օրերին դիտվել են տեղումներ՝ հոկտեմբերի 9-ի ցերեկը, 10-ի գիշերը պայմանավորված արևմուտքից ցիկլոնի անցմամբ(նկ.36,37), 14-23-ին՝ ՌԵՏ ստացիոնար անտիցիկլոնի հարավային ծայրամասում արևմուտք-արևելք ձգվող ստացիոնար ճակատի ազդեցությամբ: Սակայն դիտված տեղումները եղել են կլիմայական նորմայից պակաս: Կազմել են տեղումների ամսական նորմայի ընդամենը 50-80%-ը:



Նկ. 36 Արևմտյան ցիկլոնի դիրքը երկրամերձ քարտեզի վրա




Նկ. 37 Ցիկլոնի ամպամածության գոյրին արբանյակային լուսանկարի վրա (08.10.2022 ժ 15:00)

Նոյեմբեր 2022թ.

Նոյեմբերին հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 2-4 աստիճանով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից





Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայի սահմաններում, երկրորդ տասնօրյակում բարձր 0,5-3, երրորդ տասնօրյակում՝ բարձր 3-5 աստիճանով:


Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 15-32%, Վայոց ձորում՝ 50-100%, Սյունիքում՝ 19-23% (Սիսիան՝ 110%), Շիրակում՝ 30-45%, Կոտայքում՝ 30-66%, Լոռիում՝ 11-23%, Գեղարքունիքում՝ 33-79%, Արմավիրում՝ 78%, Արարատում՝ 35-52%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 55-96%, լեռնային շրջաններում՝ 44-54%, Երևան քաղաքում՝ 32-51%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Նոյեմբերի 1-10-ին հանրապետության առանձին շրջաններում (թույլ), 11-ին, 17-ին, 25-26-ին, 30-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:




Գծապարկեր 11. Տեղումներ, նոյեմբեր 2022թ.

Նոյեմբերի 30-ի դրությամբ հանրապետության բարձր լեռնային շրջաններում է միայն ձյան ծածկ ձևավորվել (Արագած բ/լ՝ 27սմ):

Առանձին օրեր հանրապետության առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 200-500մ տեսանելիությամբ:


Մթնոլորտի շրջանառությունը նոյեմբերին

Նոյեմբեր ամսին գերակշռել են անտիցիկլոնային դաշտով պայմանավորված առանց տեղումներով օրերը (նկ.38): Ամիսն աչքի ընկավ իր չորությամբ և բարձր ջերմային ֆոնով: Օդի առավելագույն ջերմաստիճանը հովտային գոտիներում բարձրացել էր մինչև +20...+22, լեռնային շրջաններում՝ +10...+15 աստիճան: Այդ օրերին միջին օրական ջերմաստիճանները բարձր են եղել նորմայից 5-7 աստիճանով: Ամսական տեղումների քանակը հանրապետության շրջանների զգալի մասում խիստ պակաս էին, կազմել են նորմայի ընդամենը 30-50%-ը:




Նկ.38 Անտիցիկլոնը գերնամերձ սինոպտիկական քարտեզի վրա

ԲՏ 500մբ մակերևութի բարիկական քարտեզի վրա հանրապետության տարածքը հարավից պարբերաբար գտնվում էր բարձր կատարի՝ արևադարձային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում (նկ.39):




Σκ.39 Ραφδρ կարտը PS 500 մակերևութի բարիկական քարտեզի վրա

Առանձին շրջաններում առանձին օրերին (նոյեմբերի 11-ին, 17-ին, 25-27-ին, 30-ին), պայմանավորված արևմուտքից ներթափանցող ցիկլոններով, դիտվել են տեղումներ: (նկ. 40,41):



Σκ.40 Արևմտյան ցիկլոնը գեղրամերձ սինօպթիկական քարտեզի վրա




Σκ.41 Ցիկլոնի հեղ կապված ամպամածությունը արբանյակային լուսանկարի վրա

Դեկտեմբեր 2022թ.

Դեկտեմբերին՝ օդի ամսական միջին ջերմաստիճանը, հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից մինչև 2-4 աստիճանով, Լոռիում, Տավուշում, Սյունիքում և Արցախում եղել է նորմայի սահամաններում՝ մի փոքր բացասական շեղումով:

Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից




Միջին տասնօրյակային ջերմաստիճանը բոլոր երեք տասնօրյակներին բարձր է եղել նորմայից 1-4 աստիճանով, բացառությամբ Լոռիի, Տավուշի, Սյունիքի և Արցախի, որտեղ առաջին և երրորդ տասնօրյակներում ցածր է եղել նորմայից 1-3 աստիճանով:


Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 149-180% (Դիլիջան՝ 43%), Վայոց ձորում՝ 15-37%, Սյունիքում՝ 25-53% (Մեղրի՝ 6%), Շիրակում՝ 42-62% (24%), Կոտայքում՝ 13-21%, Լոռիում՝ 66-121%, Գեղարքունիքում՝ 25-78%, Արմավիրում՝ 45%, Արարատում՝ 32-54%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 27-61%, լեռնային շրջաններում՝ 20-53%, Երևան քաղաքում՝ 32-53%:

Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից



Դեկտեմբերի 1-8-ին շրջանների զգալի մասում (թույլ), 13 և 21-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Մնացած օրերին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:




Գծապարկեր 12. Տեղումներ, դեկտեմբեր 2022թ.


Ողջ ամսվա ընթացքում Արարատյան դաշտում և նրա նախալեռներում, Երևանում դիտվել է մառախուղ 40-500մ տեսանելիությամբ:

Մթնոլորտի շրջանառությունը դեկտեմբերին

Դեկտեմբերի սկզբին հանրապետության տարածքում դիտվել են տեղումներ՝ հարավից և արևմուտքից ներթափանցող ցիկլոններով պայմանավորված: Շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, Արարատյան դաշտում և Սյունիքի հովտային գոտիներում՝ անձրևի տեսքով (նկ. 42, 43):




Նկ.42 Արևմտյան ցիկլոնը գերինամերձ սինոպտիկական քարտեզի վրա



Նկ.43 Ցիկլոնի հետ կապված ամպամածությունը արբանյակային լուսանկարի վրա (04.12.2022 ժ 16:00)

Դեկտեմբերի երկրորդ և երրորդ տասնօրյակները առանձնանում էին չորությամբ: Հանրապետության տարածքը գտնվել է Սիբիրի տարածքում ձևավորված հզոր անտիցիկլոնի (կենտրոնում 1050հՊա ճնշումով) հարավարևմտյան ծայրամասում, ինչով պայմանավորված դիտվել է պարզ-անամպ եղանակ՝ ցուրտ գիշերներով և համեմատաբար տաք ցերեկներով (նկ.44):



Նկ.44 Սիբիրական անտիցիկլոնը գեղնամերձ սինոպտիկական քարտեզի վրա

Դեկտեմբերն աչքի է ընկել Արարատյան դաշտում և նրա նախալեռներում, Երևանում դիտված մառախուղներով 40-500մ տեսանելիությամբ: Այն հիմնականում ունեցել է ինվերսիոն բնույթ:



Նկ.45 Արարատյան դաշտում և նրա նախալեռնային շրջաններում դիտված մառախուղը արբանյակային լուսնկարի վրա (25.12.2022 ժ 16:00)

Մառախուղի ինտեսիվությունը մեծացել է հատկապես դեկտեմբերի 14-ից, երբ մեր տարածաշրջան հարավից դիտվում էր տաք օդի ներհոսքը: Նման պայմաններում երկրամերձ մակերևույթում սառը օդի լճացում է դիտվել, իսկ բարձր մակերևույթի վրա՝ տաք օդի ներթափանցում: (Նկ.45)

Առաջին օրերին մառախուղը սկսվել է Արաքսի հովտից, Արարատյան դաշտի ամենացածր վայրերից և տարածվել՝ ընդգրկելով ողջ Արարատյան դաշտը: Շարունակելով ուղղահայաց տարածվել՝ բարձրացել և ընդգրկել է նրա նախալեռնային շրջանները՝ առաջացնելով վտանգավոր մառախուղ:

Դեկտեմբերի 26-ից այդ ինվերսիոն մառախուղը ընդլայնվել է՝ հասնելով Մեղրիի կիրճ և Շիրակի դաշտ: Այդ օրերին Գյումրիում, Արթիկում և իրենց հարակից շրջաններում դիտվել է 50մ տեսանելությամբ մառախուղ:

Մառախուղը ցրվել է դեկտեմբերի 30-ին՝ հյուսիս-արևմուտքից ցիկլոնի անցումից հետո: Դիտվել է եղանակի լիարժեք պարզեցում: